ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Հ/149

ՀՀ, ք. Երևան

«04» նոյեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Գովազդատու)՝ ի դեմս գործադիր տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հանքաշար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Գովազդակիր)՝ ի դեմս տնօրեն Գոռ Բարոյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, հետագա շարադրանքում միասին անվանվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրում գործածվող հիմնական հասկացությունները.

Տեսահոլովակ	Գովազդատուի կողմից մատուցվող ծառայությունների /ապրանքների վերաբերյալ տեղեկատվական բնույթի նյութ:
Գովազդատու	Տեղադրման և հեռարձակման նպատակով տեսահոլովակը ներկայացնողը:
Գովազդակիր	Գովազդատուի կողմից ներկայացված տեսահոլովակը տեղադրող ու հեռարձակումն իրականացնող:
Գովազդային բլոկ	5 րոպե տևողությամբ անընդմեջ գովազդային հեռարձակում:
Եթերային օր	Յուրաքանչյուր օր, առավոտյան ժամը 08:00-ից մինչև գիշերվա ժամը 01:00:
Հանձնման-ընդունման ակտ	Տեսահոլովակի տեղադրման և հեռարձակման, փաստացի տեղաբաշխման և տարածման տևողության վերաբերյալ Գովազդատուի և Գովազդակրի կողմից հաստատված ակտը:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Սույն պայմանագրով Գովազդակիրը պարտավորվում է Գովազդատուի կողմից տրամադրած Տեսահոլովակը տեղադրել և հեռարձակել Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում (այսուհետ՝ Մանկական Եվրատեսիլ 2022 երգի միջազգային մրցույթ, Ծառայություններ): Գովազդատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունները և Գովազդակրին վճարել Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3. ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3.1. Տեսահոլովակը պետք է տեղադրվի և հեռարձակվի Երևան քաղաքի հետևյալ հասցում տեղակայված լուսադիոդային էկրաններով (այսուհետ նաև՝ Էկրան).

- Հյուսիսային պողոտա 6/2 հասցում (6 էկրան),

3.2. Պայմանագրի 3.1 կետում նշված յուրաքանչյուր էկրանի աշխատանքային ժամանակն է մեկ Եթերային օր: Մեկ եթերային օրվա ընթացքում յուրաքանչյուր էկրանի վրա Տեսահոլովակը ենթակա է ցուցադրման առնվազն 192 (մեկ հարյուր իննսուներկու) անգամ:

3.3. Գովազդատուին՝ ծառայությունների մատուցման ողջ ընթացքում, յուրաքանչյուր Էկրանով, յուրաքանչյուր Եթերային օր, յուրաքանչյուր Գովազդային բլոկում տրամադրվում է 15 (տասնհինգ) վայրկյան եթերային ժամանակ:

3.4. Պայմանագրի գործողության ողջ ընթացքում Գովազդակիրը պարտավորվում է Գովազդատուին տրամադրել Ծառայություններ Գովազդատուի պատվիրած ծավալներով (այսուհետ՝ Ծառայությունների ծավալ):

3.5. Տեսահոլովակը Գովազդատուի կողմից Գովազդակրին է փոխանցվում Էլեկտրոնային փոստի միջոցով, ֆլեշ-կրիչով կամ DVD խտասկավառակով կամ Կողմերի միջև համաձայնեցված այլ եղանակով/կրիչով:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Գովազդակիրը պարտավորվում է.

4.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ կերպով, պայմանագրով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան. մատուցման ողջ ընթացքում պատշաճ որակով իրականացնել Տեսահոլովակի հեռարձակումը և դրա համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկումը:

4.1.2. Պահպանել Տեսահոլովակի հեռարձակման՝ Պայմանագրով սահմանված ծավալները:

4.1.3. Չնախատեսված տեխնիկական պատճառներով, Տեսահոլովակը Պայմանագրով սահմանված օրը ընդհանրապես չհեռարձակելու, կամ ընդհատումներով, վատ որակով հեռարձակելու դեպքում կրկնակի ծավալով այն փոխհատուցել Տեսահոլովակի հաջորդ թողարկմամբ:

4.1.4. Էկրանի անսարքության դեպքում վերանորոգել այն առավելագույնը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում: Նշված դեպքում չհեռարձակված Տեսահոլովակների դիմաց Պայմանագրի արժեքը ենթակա է վերահաշվարկի՝ համապատասխանաբար նվազեցման նպատակով:

4.1.5. Առանց Գովազդատուի գրավոր համաձայնության իր գործունեությունը գովազդելու համար չօգտագործել Գովազդատուի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, իր կողմից պատրաստվող նյութերում չօգտագործել Գովազդատուի կողմից տրամադրված գովազդային նյութից կադրեր, մոտեցումներ, կամ հեղինակային ու հարակից իրավունքների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանման ենթակա այլ տեղեկատվությունը:

4.1.6. Անհապաղ վերացնել Գովազդատուի կողմից Գովազդի տարածման ծառայություններում հայտնաբերված թերությունները:

4.1.7. Առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության, չկատարել Գովազդատուի կողմից տրամադրված Տեսահոլովակի բովանդակությունից շեղում:

4.1.8. Պայմանագիրը կնքելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ողջ ընթացքում՝ ըստ Գովազդատուի պահանջի ներկայացնել վերջինիս ՀՀ, քաղաք Երևանում (անհրաժեշտության պարագայում նաև ՀՀ մարզերում) արտաքին գովազդի բիլբորդերների կամ այլ արտաքին գովազդի տեղադրման վայրերի վերաբերյալ Գովազդակրի ունեցած թույլտվությունները:

4.2. Գովազդատուն պարտավորվում է.

4.2.1. Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով կատարել Ծառայությունների վճարը:

4.2.2. Գովազդակրին տրամադրել ՀՀ օրենսդրությանը համապատասխան տեղեկատվություն պարունակող Տեսահոլովակ (Գովազդային նյութ), որը չի պարունակում **«հովանոցային» գովազդ:**

4.2.3 Գովազդատուն է կրում Տեսահոլովակով գովազդվող նյութի իրականությանը համապատասխանության պատասխանատվությունը:

4.3. Գովազդակիրն իրավունք ունի.

4.3.1. Տեսանյութը չհեռարձակել՝

Արտակարգ իրավիճակների, պատերազմական դրության, ինչպես նաև Կողմերից մեկի՝ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարմանը խոչընդոտող օրենսդրության փոփոխությունների և նորմատիվ ակտերի հրապարակման դեպքում: Նշված դեպքերում Պայմանագրի պայմանները (ծառայությունների մատուցման ժամկետ, արժեք) ենթակա է Կողմերի կողմից վերանայման:

4.4. Գովազդատուն իրավունք ունի.

4.4.1. Ցանկացած ժամանակ ստուգել Տեսանյութի հեռարձակման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Գովազդակրի գործունեությանը:

4.4.2. Ցանկացած պահի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախօրոք 7 /յոթ/ օր առաջ տեղեկացնելով Գովազդակրին:

4.4.3. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Գովազդակրին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

4.4.4. Գովազդի տարածման ծառայություններում թերություններ հայտնաբերելու դեպքում առաջարկե Գովազդակրին անհապաղ վերացնել մատնանշված թերությունները:

4.4.5.1. թույլ է տվել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտականությունների խախտում, և իր կողմից թույլ տված խախտումը վերացնելու մասին ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում չի վերացրել այն: Պայմանագրով սահմանված ժամկետներում չի մատուցել Ծառայությունները կամ դրանց մի մասը, այլ կերպ թույլ է տվել սույն Պայմանագրի էական խախտում:

Կողմերի պատասխանատվությունը.

4.5.1. Գովազդակրի կողմից Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու դեպքում Գովազդատուն կարող է Գովազդակրի նկատմամբ կիրառել տույժ՝ չմատուցված Ծառայությունների արժեքի՝ կետանցի յուրաքանչյուր ուշացրած օրացուցային օրվա համար 0,1%-ի (զրո ամբողջ մեկ տասնորդական) չափով:

4.5.2. Գովազդատուի կողմից վճարման պարտավորությունները չկատարելու դեպքում Գովազդակիրը կարող է Գովազդատուիի նկատմամբ կիրառել տույժ՝ չվճարված գումարի 0,1%-ի (զրո ամբողջ մեկ տասնորդական) չափով՝ կետանցի յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար:

4.5.3. Պայմանագրով սահմանված բոլոր տույժերը կարող են կիրառվել այն պահանջելու իրավունք ունեցող կողմի հայեցողությամբ և ենթակա են վճարման 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում այն դեպքում և այն պահից սկսած երբ դուրս է գրվել համապատասխան հաշիվ-վավերագիր:

4.5.4. Տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու նախախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՉԱՓԸ

5.1. Ծառայությունների մատուցման արժեքը կազմում է՝ 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ բոլոր կիրառելի հարկերն ու պարտադիր վճարները:

5.2. Ծառայությունների դիմաց Գովազդատուն վճարում է Գովազդակրին անկանխիկ եղանակով, Պայմանագրի արժեքը հաշիվ-վավերագիրը և հանձնման-ընդունման ակտը երկկողմանի ստորագրելուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Գովազդակրի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.3. Ծառայությունների մատուցման ավարտից հետո Գովազդակիրը պարտավորվում է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Գովազդատուին ներկայացնել իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

5.4. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Գովազդատուն Գովազդակրի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և ծավալը, և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը: Ընդ որում, սույն Պայմանագրի շրջանակներում հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի հաստատման օր է համարվում դրանց վրա Կողմերից վերջինի ստորագրության (կնիքի առկայության դեպքում նաև կնքման) օրը:

5.5. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Գովազդատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 5.4. կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ կամ սույն Պայմանագրի 4.4.5. կետով սահմանված կարգով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5.6. Հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը Գովազդատուի կողմից ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից չհաստատվելու և թերությունները հիմնավորող գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում դրանք համարվում են հաստատված ներկայացման օրը:

5.7. Գովազդակրի կողմից մատուցված Ծառայությունների դիմաց վճարելու Գովազդատուի պարտավորությունը համարվում է կատարված դրամական միջոցները Գովազդատուի բանկային հաշվից ելքագրման պահին:

5.8. Կողմերից յուրաքանչյուրը կրում է իրեն սպասարկող բանկում առաջացած ծախսերը:

6. ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

6.1. Պայմանագրի յուրաքանչյուր Կողմ սույնով հայտարարում, հաստատում և երաշխավորում է, որ՝ ստացել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության և իր հիմնադիր փաստաթղթերի պահանջներին

համապատասխան Պայմանագրի կնքման համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները և հավանությունները, ինչպես նաև պահպանել է ներքին կորպորատիվ ընթացակարգերը:

6.2. Գովազդատուն անվերապահորեն երաշխավորում է, որ իր կողմից տրամադրված Տեսահոլովակի բովանդակությունը չի պարունակում ՀՀ իրավական ակտերով արգելված գովազդ, չի խախտում երրորդ անձանց իրավունքներն՝ այդ թվում հեղինակային:

6.3. Գովազդատուն անվերապահորեն ընդունում է, որ Գովազդակիրը որևէ պատասխանատվություն չի կրում Տեսահոլովակի բովանդակության համար: Տեսահոլովակի ՀՀ իրավական ակտերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու, երրորդ անձանց իրավունքները խախտելու արդյունքում Գովազդակրի համար առաջացած բացասական հետևանքների, նյութական վնասների, ծախսերի, այդ թվում՝ դատական ծախսերի, վնասների, վարչական տուգանքների, համար նյութական պատասխանատվություն է կրում Գովազդատուն և պարտավորվում է փոխհատուցել դրանք ամբողջ ծավալով:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄ ՈՒՆԵՑՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ

7.1. Կողմերը պարտավորվում են սույն պայմանագրի գործողության ընթացքում կողմի կամ այդ կողմի հաճախորդների վերաբերյալ միմյանց հայտնի դարձած բանկային, առևտրային գաղտնիք կազմող կամ գաղտնիության որոշակի այլ ռեժիմով դասակարգված տեղեկատվությունը (այդ թվում՝ սույն պայմանագիրը (բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագրի պատշաճ կատարումը առանց այդպիսի բացահայտման հնարավոր չի լինի) Գովազդատուի՝ գովազդի տեղաբաշխման քաղաքականության, մոտեցումների վերաբերյալ տեղեկատվությունը, սույն պայմանագրից հրաժարվելու պատճառների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն)չհրապարակել, իրենց կամ երրորդ անձանց շահերից ելնելով դրանք չօգտագործել, երրորդ անձանց կողմից այդպիսի օգտագործման հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակի չընձեռել:

7.2. Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է մյուս կողմի կամ վերջինիս հաճախորդների վերաբերյալ սույն պայմանագրի 7.1. կետով նախատեսված և իրեն հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը ապահովելու համար ձեռնարկել տեխնիկական, ծրագրային կամ այն բոլոր ապահովման միջոցները, որոնք ձեռնարկում է

սեփական դասակարգված տեղեկատվության պահպանման համար կամ որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ՀՀ գործող օրենսդրությամբ կամ գործարար շրջանառության սովորույթներով սահմանված դեպքերում և կարգով:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրա կնքման (Կողմերի ստորագրման) պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

8.2. Ծառայությունների մատուցումը իրականացվում է՝ 11.11.2022թ.-ից մինչև սույն թվականի 11.12.2022թ.-ը ներառյալ:

8.3. Պայմանագրի առանձին դրույթի կամ մասի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս դրույթների կամ մասերի անվավերությանը:

9. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

9.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարելը, համաճարակը և այլն:

9.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 10 (տաս) օրից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

10.2. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն:

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

11.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ գրավոր կազմված համաձայնագրերով, որոնք կհանդիսանան Պայմանագրի անբաժանելի մասը:

11.2. Մինչև սույն պայմանագրի 8.2. կետով սահմանված՝ ծառայությունների մատուցման ժամկետի լրանալը, սույն պայմանագիրը կարող է լուծվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

11.3. Գովազդատուն իրավունք ունի իր հայեցողությամբ ցանկացած ժամանակ միակողմանի արտադատական կարգով լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին 7 (յոթ) օր առաջ գրավոր տեղեկացնելով Գովազդակրին: Պայմանագրի լուծումը չի ազատում Կողմերին լուծման պահի դրությամբ միմյանց հանդեպ ունեցած պարտավորությունների կատարումից:

11.4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման կապակցությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պարտավորություններ մրցույթի անցկացման հետ կապված՝ Գովազդակիրը պարտավորվում է առանց լրացուցիչ համաձայնություն տրամադրելու այդ բոլոր պարտավորությունները ստանձնել այն նույն ծավալով, որ ծավալով կսահմանվեն Գովազդատուի համար, պայմանով, որ դրանք լինեն ողջամիտ, չառաջացնեն լրացուցիչ ֆինանսական ծախսեր Գովազդակրի համար և վերաբերեն սույն Պայմանագրով Գովազդակրի ստանձնած պարտավորություններին: Լրացուցիչ պարտավորությունների մասին Գովազդատուն պարտավորվում է Կատարողին ծանուցել անհապաղ, որոնք ուժի մեջ են մտնում Գովազդակրի համար դրանց մասին ծանուցվելու պահից, եթե այլ բան չի բխում տվյալ ծանուցումներից:

12.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12.1. Պայմանագիրը բաղկացած է հիմնական մասից, որի տեքստը բաժանված է համարակալված հոդվածների և կետերի: Պայմանագրի նշված բոլոր կառուցվածքային տարրերը միասին կազմում են մեկ ամբողջություն՝ Պայմանագրի մեկնաբանման և կատարման բոլոր նպատակների համար:

12.2. Կողմերը վերը նշված ամսաթվին կազմեցին և կնքեցին Պայմանագիրը հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

13. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՈՎԱԶԴԱՏՈՒ	ԳՈՎԱԶԴԱԿԻՐ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	**«ՀԱՆՔԱՇԱՐ» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	ՀՎՀՀ՝ 00931226
ՀՎՀՀ՝ 01540062	Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Փափազյան 8
«Ինեկոբանկ» ՓԲԸ	Գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հյուսիսային պողոտա 6/2
Հ/Հ՝ 2050022082671001	Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
	Հ/Հ՝ 11500857737700 ՀՀ դրամ
Գործադիր տնօրեն՝ Հ. Մովսիսյան	Տնօրեն՝ Գ. Բարոյան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ԿՆ-4074-51405 1532/22

Տրվում է
«ՀԱՆՔԱՇԱՐ» ՍՊԸ, ՀՎՀՀ՝ 00931226

Արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) վայրը՝
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱ 6/2 ՝ 1-ԻՆ ԿՐԻՉ, ԿՈՂՄ Ա

Արտաքին գովազդի տեղաբաշխելու (տեղադրելու) միջոցը
(վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պաստառ և այլն)՝ **ՇԻՆՈՒԹՅՈՒՆ - ՎԱՀԱՆԱԿ**

Գովազդի տեսակը՝ **ԱՅԼ ԳՈՎԱԶԴ**
Գովազդի մակերեսը՝ **37.08 քմ**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01/09/2022-ից մինչև 31/10/2022-ը**

Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար ՝ _____ Ս. ՂՈՒԿԱՍՅԱՆ
19/09/2022 թ

Կ.Տ.

Կատարող ՝ Լիլիթ Մաթևոսյան
Հեռ.՝ (+37411) 518 412

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ (ՏԵՂԱԴՐՄԱՆ)

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ԿՆ-4072-51402 1533/22

Տրվում է
«ՀԱՆՔԱՇԱՐ» ՍՊԸ, ՀՎՀՀ՝ 00931226

Արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) վայրը՝
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂՈՏԱ 6/2 ՝ 1-ԻՆ ԿՐԻՉ, ԿՈՂՄ Ա

Արտաքին գովազդի տեղաբաշխելու (տեղադրելու) միջոցը
(վահանակ, լուսատախտակ, գրաժապավեն, պաստառ և այլն)՝ **ՇԻՆՈՒԹՅՈՒՆ - ՎԱՀԱՆԱԿ**

Գովազդի տեսակը՝ **ԱՅԼ ԳՈՎԱԶԴ**
Գովազդի մակերեսը՝ **18.56 քմ**

Թույլտվության գործողության ժամկետը՝ **01/09/2022-ից մինչև 31/10/2022-ը**

Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար ՝ _____ Ս. ՂՈՒԿԱՍՅԱՆ
19/09/2022 թ

Կ.Տ.

Կատարող ՝ Լիլիթ Մաթևոսյան
Հեռ.՝ (+37411) 518 412

«ՀԱՆՔԱՇԱՐ» ՍՊԸ

ООО "АНКАШАР"

ք. Երևան, Փափազյան 8 հեռ. 28 18 08, 055 272714 ,г. Ереван, ул.Папазяна 8, тел. 28 18 08
էլ . հասցե meri.advocate@gmail.com эл. почта meri.advocate@gmail.com

01.11.2022թ.

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար
Պարոն՝ Սամվել Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան,

ՀՀ, ք.Երևան, Հյուսիսային պողոտա 6/2 հասցեում գտնվող արտաքին գովազդի վահանակների համար խնդրում ենք հատկացնել համապատասխան թույլտվություն նոյեմբեր-դեկտեմբեր 2022թթ. ժամկետով:

1.Կից ներկայացնում եմ վճարման անդորրագրերը:

Հարգանքով՝
Հանքաշար ՍՊ Ընկերության
տնօրեն Գոռ Բարոյան

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՍՏԱՑԱԿԱՆ

Գրանցման համար	Դ-98914-22
Գրանցման ամսաթիվ	2022-11-01 11:35:44
Դիմումն ընդունեց	Լիլիթ Արշակյան
Դիմող	Հանքաշար ՍՊԸ
Հսկիչ համար	YN54-96AB-8BB5-D7E5
Պատասխանի վերջնաժամկետ	01.12.2022
Թեմա	Գովազդային վահանակների տեղադրում
Բովանդակություն	Գովազդային վահանակի թույլտվության խնդրանք

Ձեր դիմումը գրանցվել է Երևանի քաղաքապետարանում: Դիմումի ընթացքի մասին կարող եք տեղեկանալ՝

«ՀԱՆՔԱՇԱՐ» ՍՊԸ
ООО "АНКАШАР"

ք. Երևան, Փափազյան 8 հեռ. 28 18 08, 055 272714 ,г. Ереван, ул.Папазяна 8, тел. 28 18 08
էլ . հասցե՝ meri.advocate@gmail.com эл. почта meri.advocate@gmail.com

01.11.2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062

Գործադիր տնօրեն՝ Հ. Մովսիսյան

Տեղեկանք

Էկրանների պատկանելիության, թույլտվությունների վերաբերյալ

Հարգելի պարոն Մովսիսյան,

Գովազդային ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելու համար, տեղեկացնում ենք, որ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 6/2 հասցեի, վերգետնյա հատվածում տեղադրված լեդ էկրանները, հանդիսանում են «Հանքաշար» ՍՊ Ընկերության սեփականությունը, իսկ համապատասխան ժամանակահատվածների համար գովազդի թույլտվությունները տրամադրվում է՝ Կենտրոն վարչական շրջանի կողմից:

Կից ներկայացնում ենք, ստացված թույլտվությունները, իսկ հաջորդող 2 ամիսների համար դիմումը ներկայացվել է՝ համապատասխան ժամանակահատվածների համար:

Հարգանքով՝
Հանքաշար ՍՊ Ընկերության
տնօրեն Գոռ Բարոյան